ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Արթուր Ալեքսանյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքակա-նության և վարչարարության մեթոդաբանության վարչության եկամուտների քաղաքակա-նության և հարկային վարչարարության մեթոդաբանության բաժնի պետ:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Հաագա (Նիդերլանդների Թագավորություն), ապրիլի 8-ից մինչև ապրիլի 11-ը:

3. Հրավիրող կողմը.

Նիդերլանդների Թագավորության ֆինանսների նախարարություն:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Գործուղման նպատակն էր մասնակցել Նիդերլանդների ֆինանսների նախարարութ-յան և ՀՀ ֆինանսների նախարարության միջև տեխնիկական համագործակցության շրջա-նակներում կազմակերպվող «Ֆինանսական հատվածի և SS ոլորտի հարկում» թեմայով հանդիպմանը՝ մասնագիտական գիտելիքները զարգացնելու նպատակով:

5. Քննարկված թեմաները.

Հանդիպման ընթացքում, մասնավորապես, քննարկվել են հետևյալ թեմաները.

1) Նիդերլանդների Թագավորությունում կիրառվող՝ ինովացիաների զարգացմանը խթանելուն ուղղված մոտեցումները (Innovation Box)

- աջակցության համակարգի ներդրման հիմնական նպատակները
- հարկային արտոնությունների տեսակները
- կատարվող աշխատանքները որպես ինովացիոն որակելու մոտեցումները
- աջակցության համակարգի կիրառության ընթացքում արձանագրված արդյունք-ները
- կիրառվող հարկային արտոնությունների համապատասխանությունը BEPS ծրագրի 5-րդ միջոցառման (Harmful tax practices) պահանջներին:

2) Բանկային հարկ

- բանկային հարկի ներդրման նախապատմությունը և նպատակը
- բանկային հարկի հիմնական բաղադրիչները
- բանկային հարկի հաշվարկի օրինակները
- հնարավոր հետագա զարգացումները
- նվազագույն կապիտալի կանոնը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ելույթներ և առանձին հանդիպումներ տեղի չեն ունեցել, իսկ հանդիպման ժամանակ բարձրացվել են ֆինանսական հատվածի հարկման և SS ոլորտի հարկման հետ կապված Նիդերլանդների Թագավորությունում գործնականում կիրառության ժամանակ առաջացած խնդիրների վերաբերյալ, ինչպես նաև մի շարք այլ հարցեր:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ընթացքում որևէ որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում նախատեսված չէր:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում ներկայացված նյութերը և քննարկված թեմաները համապատասխանում էին ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության առջև դրված խնդիրներին և դրանք կիրառելի են վարչության կողմից եկամուտների քաղաքականության նոր ուղղությունների մշակման ընթացքում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

Եկամուտների քաղաքականության և
հարկային վարչարարության մեթոդաբանության
բաժնի պետ — Արթուր Ալեքսանյան

15 ապրիլի 2024թ.